

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՅՈՒԹԵՆԻՆ

Բնութեան խընամ ով վարսագեղ ուռենիդ
Ի դալարի ծամակալ,
Օք դու անփոյթ չըքնաղ գեղսդ ընտանի
Օք թալացեալ նըւաղ աչօք չընչասպառ
Լախես գըլուխ հերարձակ
Ոզբանըւէր թագուհի:
Հովանաւորդ ի լուռ դամբանս
Ըզմա՞չ գըտեր քեզ մըխիթար .
Լամ յազազուն սին ոսկերաց
Խցէ շընչել սիւգ կենսատու .
Ուէ խոպոպիք հերացդ արդեօք
Ո՞ւն մի գուցե՞ն ջահք ի բորբոք
Տըխուր ընկերք տանըն մահու :

— Հաւատարիմն ի սէր մարդկան պանդուխտ կենաց ի հովիտ
Բնտրեմ այո նազելիս յառոյգագեղ ի հասակ
Օքւարթ աւուրց ժառանգորդ
Ենկարեկիր յերջանկութեանն իմ ի վայելս փախըստեայ
Ի սուգ խորին թախծութեան չեւ այրեցեալ ըսքօղիլ:
Ա արդ ծիրանի ծիծաղ այտիւք,
Չիւնափայլիկ յասմիկ ի փունջ,
Բուրեան մեխակ խայտախարիւ,
Հրանունկ ի բոց սընդուս պաճոյՃ,
Շ ուշանն անմեղ, յակինթ, նարպէս,
Դ ուսն արիւնոտ, որթոց ըստինք,
Ո՞ւի ըզմիով յելեւել
Հէգ մարդկութեան դիւրալուր
Գուրգիռ ի սիրտն արկանեն
Ի հեշտութիւնս առօրեայ:
Ի նըկարէն նոցին ի դէմն
Օքւարթածաղիկ թըւի կենցաղ,
Լիւնք՝ ասպարէզ հըրճուանաց,
Եւ մահ՝ պատկեր անէակ:
Լակ ես գեգեր առ շիրմօք
Եւ անժըպիտ մենաւոր

Դասմառ մարդիկ յուշարար
 Ուէ հեծութիւնք, արտասուք
 Բաժին են լաւագոյն
 Յաշխարհիս խաբուսիկ,
 Ուր վայելք սուղ ընցին
 Եւ զօսանք անցաւոր
 Յանդարձ ի թեւս սահին սուր
 Ալանան ի վիշ չեշտակի
 Երեւ զալիս ընդ հեղեղատ,
 Երեւ ամպոց գունդ հողմավար,
 Երբ ի գըրկաց փըքին թըրոցուն,
 Երեւ նըշուցայտ փայլական :

Հ. Գ. Ճ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Երրայեցոց բանաստեղծութիւնը : (Տ. եր. 98)

Բայց ուրիշ ամէն ձեւէ աւելի Ո .
 Պարոց ոձոյն վեհութիւն, ազնուականութիւն ու բարձրութիւն տուող ձեւը դիմանութիւնն է : Ու իցէ բանաստեղի մը գործածած դիմանութիւնները այնչափ փառաւոր չեն ու այնչափ չեն յափշտակեր՝ որչափ յաստուածուստ չնշեալ հեղինակաց գործածածները :
 Ո՞եծ առիթներու մէջ բնութեան ամէն մասը կը կենդանացընեն, մասնաւորապէս երբոր լուսուածային երեւումն կամ ներգործութիւն մը կայ . “ Տեսին զքեզ ջուրք, լուսուած, տեսին զքեզ ջուրք և երկեան . — Ետուն անդունդք զձայնս իւրեանց . — Ելուվեցան լերինք ’ի զօրութենէ նորա . . , և այլն : Երբոր իմաստութեան տեղոյն վրայ ինդիր կ'ըլլայ, Յոթ այսպէս կ'ըսէ . ” լուսունդք ասացին թէ չէ առիս, և ծով ասաց թէ չէ ընդ ինեւ : Երրուստ և մահ ասացին .] ուաք զփառաւորութենէ նորա . . . (Յովլի, Գլ. Իլ.) : Եսայեայ գրոց այն վսեմ հաստուածն ալ, որ լուսութանի թագաւորին կործանումը կը նկարագրէ, շատ առարկաներ կ'անձնաւորէ . ” Եւ փայտքն լիւ

բանանու ոտնահար եղենքեզ. և մայլքն ի իբանանու ասեն՝ թէ Յօրմէ հետէ դու դադարեցեր, ոչ ելին ’ի մեզ փայտահարք : Դժոխիք ’ի ներքուստ դառնացան ’ի պատահելն քեզ . կանգնեցան միանգամայն հսկայքն ամենայն որ լեալէին իշխանք երկրի . . : “ Եղնպէս ստէպ կը տեսնուին մարգարեական գրոց մէջ վառվուստն ու տաք բացագանչութիւններ առ քաղաքս և առ գաւառս, առ մարդիկ և առ իրս . ” Ո՞ինչեւ յերբ կոտորեսցես, սուրդ Տեառն, մինչեւ ցերը ոչ դադարիցես . դարձիր ’ի պատեանս քո, դադարեա և վերացիր : Օ իարդ դադարիցէ . զի Տէր հրամայեաց զնա ’ի վերայ լուկաղովնի, և ’ի վերայ ծովեզերեայցն մնացելոց զարթնուլ . . (Երեւմ . Խէ) :

Բնդհանրապէս խօսելով, որովհետեւ շատ երկայն կ'ըլլար թէ որ ուզէինք ամէն բանի օրինակ մէջ բերել, հին կտակարանին ամենայն բանաստեղծական գրոց ոձը աշխոյժ է, սլացական, և կենդանի քան ուրիշ ամէն բանաստեղծներունք : Բայլորովին կը տարբերի այն կանոնաւոր և կոկ բացատրութենէն, որուն վարժեցուցած են ականջնիս նոր բանաստեղծութիւնները . որովհետեւ ներքին շնչման թափն է : Տեսարանները ցուրտ կերպով ստորագրուած չեն, ընդ հակառակն անանկ